

ՄԱՐԵՏԱ ՆԻԿՈՂՈՅԱՆ  
MARETA NIKOGHOSYAN

ՇԼԱՅԵՐՄԱԽԵՐԻ «ՅԱՄԸՆԴՅԱՆՐԱԿԱՆ»  
ՅԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ

Փիլիսոփայական մտքի զարգացման աղբյուրներից մեկը հումանիտար գիտելիքի խնդրակարգի միջոցով իրականության փիլիսոփայական-տեսական իմաստավորումն է: Փիլիսոփայության հակադարձ ազդեցությունը սոցիալական իրականության վրա ենթադրում է մեթոդների, ձևերի և ուղիների որոնում, որոնցով տեսական այս գիտությունը կոչված է իրականացնելու իր աշխարհայացքային գործառույթները: Հումանիտար գիտությունների փիլիսոփայական հիմնախնդիրների ուսումնասիրությունն անհնար է առանց սոցիոմշակութային համատեքստի մեջ հերմենևտիկական ներթափանցման, առանց հումանիտար մշակույթի գործառման պատմական միջավայրի վերլուծության, որում հումանիտար գիտություններն իրենք դառնում են դրա անքակտելի տարրեր: Սեկնաբանությունը փիլիսոփայական գիտելիքի գործառության ձևն ու եղանակն է, նրա անկապտելի հատկությունը և, որպես կանոն, յուրաքանչյուր նոր փիլիսոփայական գիտելիք մեկնաբանության արդյունք է: Ժամանակակից մարդն ապրում է գերհագեցած տեղեկատվական աշխարհում, հաղորդակցվում է տարբեր մշակութային ավանդույթների ու արժեքների հետ, որոնք յուրացնելու համար անհրաժեշտ է տիրապետել հասկանալու և մեկնաբանելու արվեստին:

20-րդ դ. փիլիսոփայական հերմենևտիկան, սերտորեն կապված լինելով մշակութաբանական և քաղաքակրթական ոլորտների հետ: Մշակույթն է այն «պահեստարանը», որում մարդկության յուրաքանչյուր սերունդ պատմականորեն ամբարել է իմաստների սեփական և յուրօրինակ ընկալումները այս առումով փիլիսոփայական հերմենևտիկան արդիական է, որքանով որ այն իր խնդիրն է համարում մշակույթում արդեն իսկ ներկայացված, բացահայտված աշխարհի մեկնաբանումը և հասկացումը: Այս ճանապարհով անցյալի և ներկայի միջև հաստատվում է կոմունիկատիվ հարաբերություն: Ժառանգվող մշակույթը սերունդների կողմից յուրացվում է՝ նպաստելով քաղաքակրթ հասարակության կառուցմանը: Մյուս կողմից, հերմենևտիկային հետաքրքրում է ոչ այնքան օբյեկտիվ աշխարհում, որքան պատմության և մշակույթի ոլորտում, սոցիոմշակութային արժեքների ու իմաստների աշխարհում ապրող մարդը: Այդ

մարդուն հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ նրա կենսաշխարհը՝ գոյության պայմանները, արժեքային համակարգը, ձգտումներն ու իդեալները: Այլ խոսքով՝ հերմենևտիկան կոչված է ապահովելու հաղորդակցվող կողմերի, միջնակութային երկխոսության մասնակիցների միջև ստեղծվելիք կապը, գիտականորեն մոդելավորելու ու կազմակերպելու մարդու վարքագիծն ու գործունեությունը, ստեղծելու կոմունիկատիվ կապերի ու հարաբերությունների ցանց: Այսպիսի տիրույթում հերմենևտիկական հասկացումը ձեռք է բերում ոչ միայն տեսական, իմացաբանական-տրամաբանական, այլև գործնական-կիրառական բնույթ:

Ժամանակակից պայմաններում հերմենևտիկայի նկատմամբ անդրադարձն ունի գիտական, աշխարհայացքային, փիլիսոփայապատմական և մեթոդաբանական կարևոր նշանակություն: Հերմենևտիկայի զարգացման ընթացքը վերլուծելիս տեսնում ենք, որ այն առաջանում և զարգանում է այն ժամանակ, երբ գոյություն ունեն որոշակի սոցիոմշակութային պայմաններ: Այսինքն՝ սա միայն տեսություն չէ, որն առաջանում է որպես մտքի խաղ և ծառայում պատմամշակութային առումով նշանակալի ստեղծագործությունների մեկնության համար (թեև այդ գործոնն էլ գոյություն ունի), այլ՝ այն ինտենսիվորեն զարգանում է այն ժամանակ, երբ այդ զարգացման համար գոյություն ունեն սոցիալական խթաններ: Այդպիսի հասարակական խթաններ էին առաջացել ինչպես հին աշխարհում, երբ հունական պոլիսը Հոմերոսի և այլ հույն հեղինակների հնագույն տեքստերի մեկնաբանման կարիքն ուներ, այնպես էլ քրիստոնեությունը հունական աշխարհի ներթափանցելու ժամանակ, երբ Արևելքի և Արևմուտքի միջև իրականանում էին ինչպես տնտեսական, առևտրական, մշակութային աշխույժ շփումներ, այնպես էլ գիտական ու փիլիսոփայական գիտելիքների փոխանակության գործընթացներ: Քրիստոնեության նորարարները ելնում էին հին տեքստերի «նոր» ընկալումից: Նրանք հաճախ տալիս էին իրենց սրբագործված իմաստներով կաթոլիկ աստվածաբանների համար դարերով անծեռնմխելի գրքերի բովանդակության ոչ ավանդական մեկնությունը: Օրինակ, Վերածննդի հումանիստներ է. Ռոտերդամցին, Ջ. Սանետտին և ուրիշները առաջադրեցին հավատի պատմական վերլուծության գաղափարը՝ ներառյալ նաև նրա զրավոր աղբյուրների պատմական քննադատությունը: Վերածննդի հումանիստների բանասիրական և պատմական մեկնությունը ուղղված էր տեքստի «մաքրմանը», նրա իրական իմաստի բացահայտմանը: Դրա արդյունքը պետք է լիներ իմաստի ազատագրումը աստվածաբան-սքոլաստների կատարած աղավաղումներից: Հումանիստները կրոնական իմաստների տակ որոնում էին ռեալ պատմական բովանդակություն: Դրանով Վերա-

ծնունդի դարաշրջանը նշանավորվեց անցյալի մշակույթի նկատմամբ իր ուրույն վերաբերմունքով: Նոր մշակույթի գործիչների նշանակալի ներդրումը դարձավ ժառանգական կապի վերականգնումը անտիկ մշակույթի հետ: Անտիկ մշակութային ժառանգության նշանակությունն այնքան մեծ էր, որ Վերածննդի դարաշրջանը հաճախ ընկալվում էր որպես անտիկ մշակույթի բազմաթիվ կողմերի ստեղծագործական վերածնունդ՝ ավելի քան հազարամյա մոռացությունից հետո:

Մյուս կողմից՝ Վերածննդի մշակույթն իր արմատներն ուներ միջնադարյան մշակույթում այն առումով, որ անտիկ մշակույթի որոշ տարրեր վերականգնվել էին 11-13-րդ դդ. միջնադարյան կրթական համակարգի միջոցով: Բացի այդ, միջնադարի հետ կապը արտահայտվում էր նաև քաղաքային, ժողովրդական և ասպետական մշակույթի աշխարհիկ ավանդույթներին անդրադառնալով: Վերածննդի դարաշրջանում երևան եկավ բանասիրական հերմենևտիկան, որը կոչված էր անտիկ գրականությունը ենթարկել քննական հետազոտության, իսկ կրոնական տեքստերն ազատելով խեղաթյուրումից՝ վերականգնել նրանց նախասկզբնական իմաստը:

Ռեֆորմացիայի ժամանակ առաջացան նոր սոցիալական պահանջներ՝ առաջադրվեցին կաթոլիկության քննադատության և նոր կրոնական շարժման հիմնավորման խնդիրներ: Ֆ. Սելանխտոնը հանդես եկավ Աստվածաշնչի տեքստի ճշգրտման առաջարկներով: Իսկ այդ նոր կրոնական շարժումը 16-րդ դարում հիմնավորեց Մատիս Ֆլացիուսը՝ հաշտեցնելով Ալեքսանդրյան և Պերգամյան դպրոցների ուղղությունները: (Հերմենևտիկական առաջին հիմնահարցը, որ քննարկում էին այդ դպրոցները, հետևյալն էր. բառը քանի՞ իմաստ ունի՝ մե՞կ, թե՞ ավելի: Ալեքսանդրյան դպրոցն այն տեսակետն էր զարգացնում, որ բառն ունի բազմաթիվ իմաստներ: Այս դեպքում իմաստի հասկացման մեջ դրվում է սուբյեկտիվ-հոգեբանական բովանդակություն: Իսկ Պերգամյան դպրոցը գտնում էր, որ բառն ունի միակ, եզակի իմաստ, որը մեկնաբանվում է որպես խոսքի օբյեկտիվ բովանդակություն):

Մ. Ֆլացիուսը գտնում էր, որ այս երկու ուղղություններից ոչ մեկը չէր կարող հաղթել. քանի որ ցանկացած բառի իրական իմաստը եզակի է, իսկ տվյալ բառի օգտագործման համատեքստերը պայմանավորում են տարբեր իմաստային երանգներ: Այսինքն՝ Ֆլացիուսի ուսմունքում, որպես հերմենևտիկական սկզբունք, կիրառվում է համատեքստային մոտեցումը՝ ինչն էլ դրվում է Ս. Գրքի մեկնության հիմքում: Պատմականորեն ստացվեց այնպես, որ այդ երկու տեսակետները, որ հենրին թվում էին փոխբացառող, ժամանակի ընթացքում դարձան համատեղելի: Ֆլացիուսը ձևակերպեց մի սկզբունք ևս, որը

հետագայում դարձավ հերմենևտիկայի առանցքային սկզբունքներից մեկը: Դա «հերմենևտիկական շրջանի» սկզբունքն էր, երբ ամբողջը մեկնվում է՝ ելնելով նրա մեջ մտնող մասերից:

Վաղ բողոքական մեկնագիտության մեջ դրսևորվեց հերմենևտիկական ևս մեկ առանձնահատկություն՝ ավանդույթի և արդիականության հասկացման եղանակների կապը: Հերմենևտը արդիականության ամենասուր հարցերի պատասխանը որոնում է ավանդույթում: Ցանկացած հոգևոր-մշակութային նորույթ հերմենևտը ձգտում է մեկնել որպես ավանդույթի զարգացման արդյունք: Այսինքն՝ նա ուզում է ցույց տալ, որ ցանկացած նոր այնքան էլ նոր չէ, կամ առնվազն նրա բացատրության բանալին թաքնված է ավանդույթում:

Ս. Գրքի հին հրեերեն, հունարեն, լատիներեն և հայերեն (5-րդ դ.) տարբերակներն արդեն գոյություն ունեին, բայց եվրոպական երկրներում եկեղեցական ծիսակարգը դեռևս անցկացվում էր լատիներեն Աստվածաշնչով: Միայն 16-րդ դ. Մարտին Լյութերը գերմաներեն թարգմանեց Աստվածաշունչը, որից հետո Ս. Գրքը թարգմանվելով եվրոպական այլ լեզուներով՝ մատչելի դարձավ ցանկացած գրագետ մարդու համար: Յուրաքանչյուր հավատացյալ կարող էր ինքը կարդալ, հասկանալ և իր համար մեկնել նրա տեքստը, իսկ բողոքական քահանան այդ գործում միայն օգնական էր: Բողոքականության խնդիրը կրոնը և եկեղեցին հասարակ ժողովրդին մոտեցնելն էր: Այդ իսկ պատճառով ծագեց թարգմանության անհրաժեշտությունը, որն իր հերթին պահանջում էր Ս. Գրքի տեքստերի հասկացում և մեկնություն:

Հերմենևտիկայի առարկայի ընդլայնմանն ուղղված շարժումը նոր և նորագույն ժամանակներում ավելի բուռն է դառնում: 18-րդ դ. և 19-րդ դ. սկզբին երևան եկան հերմենևտներ, որոնք անդրադարձան հերմենևտիկական մեկնության մեջ առկա այլ տեսանկյուններին: Հայտնի են Ֆ. Աստի և Ա. Բյոքի ուսումնասիրությունները բանասիրության և Գ. Ֆոն Հունբուլդտի հետազոտությունները բնական լեզվի բնագավառներում: Նրա լեզվի փիլիսոփայության մեջ հերմենևտիկայի հիմնահարցերը դիտարկվում են ոչ թե քրիստոնեության, այլ՝ աշխարհայացքի և մարդու մտավոր կարողությունների հետ կապի մեջ ընդհանրապես: Գերմանացի գիտնական Ա. Բյոքը հերմենևտիկան սահմանեց որպես տեքստի հասկացման տեսություն և ներկայացրեց այդ տեսությունը կազմող բաղադրատարրերը:

ա. Ծագումնաբանական հերմենևտիկա, որի դեպքում պարզաբանվում է տվյալ ստեղծագործության ծագումնաբանությունը, թե գրական-պատմական ո՞ր դասին է պատկանում:

բ. Անհատական հերմենևտիկա՝ հեղինակի ողջ ստեղծագործության հետազոտման հիման վրա եզրակացություն է արվում հեղինակի մասին:

գ. Պատմական հերմենևտիկա՝ մեկնվում են տեքստի «մութ» տեղերը և «մթին» ակնարկները:

դ. Քերականական հերմենևտիկա՝ այստեղ ենթադրվում է լեզվի յուրաքանչյուր բաղադրիչի իմաստային բացահայտում, այսինքն՝ տեքստում կարևորվում է յուրաքանչյուր տերմինի դերը<sup>1</sup>:

Յուրբոլոտի ժամանակակից Շլայերմախերը առաջադրեց մասնավոր՝ բանասիրական, աստվածաբանական, իրավաբանական և այլ հերմենևտիկաների հիման վրա միասնական կամ «համընդհանրական» հերմենևտիկայի մշակման խնդիրը: Շլայերմախերը հետազոտողների ուշադրությունն ուղղեց հասկացման գործընթացի վրա և իր սեփական տեսական ձգտումների նպատակը համարեց դրա սկզբունքների և օրինաչափությունների բացահայտումը: Նրա հերմենևտիկական ուսմունքը ձեռք բերեց փիլիսոփայական ուղղվածություն: Իր առջև նպատակ դնելով մշակել «համընդհանրական» հերմենևտիկա, Շլայերմախերը որպես ելակետ ընդունում էր մարդու մշակութային կյանքում (անցյալ և ներկա) հասկացման երևույթի համընդհանրության փաստը: Եթե հասկացումը ունի համընդհանուր բնույթ, ապա ընդհանրության նույնափոխ աստիճան պետք է ունենա նաև հերմենևտիկան որպես ուսմունք հասկացման մասին:

Շլայերմախերի մեծ ավանդն այն է, որ միջնադարյան հերմենևտիկան կոնկրետ տեքստերի մեկնության խնդիրներից կողմնորոշեց դեպի նրանց հասկացման, հետազոտման ընդհանուր սկզբունքները: Նա հարում էր այդ ժամանակ գործող գերմանական ռոմանտիկական դպրոցին: Ռոմանտիզմը կարևոր ուղենիշ է հերմենևտիկայի զարգացման համար: Ռոմանտիկական շարժումը փոխարինելով լուսավորությանը, առաջացավ որպես հիասթափություն 18-րդ դ. ֆրանսիական հեղափոխության պատմական արդյունքների և բուրժուական առաջադիմության նկատմամբ ընդհանրապես: Ռոմանտիզմի խանդավառությունը իր ժամանակի աշխարհի աններդաշնակության բացահայտումն էր և ձգտումը մարդու համապարփակ զարգացման ու ներդաշնակ հասարակական կապերի ձևավորման նկատմամբ: Ռոմանտիզմի մշակույթի փիլիսոփայությունը կազմավորվում է օգտապաշտության և բուրժուական մշակույթի հավակնոտ նորմերի քննադատության ընթացքում: Օրինակ, Շլայերմախերը

<sup>1</sup> Энциклопедический словарь (издат. Брокгауз и Эфрон), т. 70, СПб, 1902, с. 809-811 ("Филологическая критика"), 816 ("Филология").

խոսում էր ցանկացած բարոյականության «ամբարոյության» մասին: Մյուս կողմից նա գտնում էր, որ գեղարվեստական ազատությունը պետք է ընկալել որպես ցանկացած ստեղծագործողի իրավունք՝ հետևելու իր ներքին զգացողությանը, ինչպես նաև նրա անկախությունը արտաքինից պարտադրվող կանոններից և արվեստի ավանդական սահմաններից: Իր թարգմանական գործունեությունը ավելի բարձր մակարդակի հասցնելու համար նա մշակեց հերմենևտիկայի, որպես մեկնագիտության, տեսական հիմունքները:

Շլայերմախերի ուսմունքում հերմենևտիկան արդեն չէր հանգում սուրբ տեքստերը հասկանալու և մեկնելու հնարներին կամ «Աստծու հետ հավատացյալի հաղորդակցության միջոցներին», այլ՝ ընդգրկում էր լեզվի, (ամենից առաջ օբյեկտիվորեն գեղեցիկի արտացոլումը պոեզիայում) և արվեստի հիմնահարցերը: Ըստ Շլայերմախերի.- «Այն ամենը, ինչ ենթադրվում է հերմենևտիկայում, միայն լեզու է, և այն ամենը, ինչ կարող է բացահայտվել, ներառյալ նաև մնացած օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալները, այդ ամենը կարելի է գտնել լեզվում»<sup>2</sup>:

Շլայերմախերը գտնում էր, որ հերմենևտիկայի առարկան հուշարձան դարձած տեքստերն են, այն տեքստերը, որոնք հետազոտողից բաժանված են մշակութային, պատմական, լեզվական և ժամանակային մեծ հեռավորությամբ: Տեքստերը հետազոտողին ներկայանում են որպես «քարացած խոսք», որն արտաքննապես օբյեկտիվ է: Այստեղից հետևում է խիստ կարևոր մի սկզբունք՝ նրանց հետազոտության մեթոդը պետք է երկխոսային լինի, այսինքն՝ երկխոսություն պետք է իրականանա մեկնողի և տեքստի միջև:

«Քարացած խոսքը», Շլայերմախերի կարծիքով, ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր: Խոսքի օբյեկտիվ կողմը քերականական մեկնաբանման առարկան է: Այստեղ մենք բացահայտում ենք լեզվի նկատմամբ հարաբերությունը, թե նա օբյեկտիվորեն ինչ կերպ գոյություն ունի: Իսկ պատմական տեքստի սուբյեկտիվ կողմը հետազոտվում է հոգեբանական մեկնաբանման օգնությամբ, այսինքն՝ լեզվին վերաբերվում ենք որպես որոշակի ածանցյալի իր ստեղծողից: Հասկացումը, Շլայերմախերի կարծիքով, այստեղ ապահովվում է այս երկու պահերի փոխկեցությանը: Այս կապակցությամբ 20-րդ դարավերջի նշանավոր մտածող Պ. Ռիկյորը գրում է. «Մեկնության նպատակով կատարվող աշխատանքը խորը իմաստ ունի՝ հաղթահարել մշակութային այն հեռավորությունը, որն առանձնացնում է ընթերցողին իրեն օտար տեքստից, որպեսզի նրան ղևի միևնույն հարթության վրա և այդպիսով ձեռք բերի և այդ տեքստի

<sup>2</sup> *Schleiermacher G. D. E. Hermeneutic, Heidelberg, 1959. p. 38*

իմաստը և այն հասկացումը, որն անհրաժեշտ է ընթերցողին»<sup>3</sup>: Հասկացման վերջնական նպատակը մեկնաբանողի ամբողջական միաձուլումն է հեղինակի անձի հետ, որն իրեն արտահայտել է տեքստում: Այդպիսի միաձուլումը ձեռք է բերվում մեկնաբանողի կողմից հեղինակից մինչև ստեղծագործությունը ծնող նախնական խթանն ընկած ճանապարհին: Սա, ըստ էության, նշանակում է, որ մեկնաբանողն անցնում է հեղինակի ուղին հակառակ ուղղությամբ՝ ամբողջությամբ կրկնելով նրա ստեղծագործական գործունեությունը: Այստեղ մեկնաբանողը պետք է ուսումնասիրի ոչ միայն հեղինակի գիտակցությունը, այլև ենթագիտակցականն ու անգիտակցականը, որն անկախ հեղինակի կամքից հայտնվել է ստեղծագործության մեջ: Ի վերջո մեկնաբանողը հեղինակին պետք է հասկանա ավելի մեծ չափով և ավելի լավ, քան հեղինակը հասկանում էր ինքն իրեն: Պարզ է, որ նման հասկացման կարող է հասնել միայն համապատասխան տաղանդով օժտված մարդը: Այդպիսով, մեկնաբանի տաղանդը պայման է դառնում հասկացման կայացման համար: Այլու կողմից հասկացման գործընթացը որևէ կախվածություն չպետք է ունենա:

«Շլայերմախերի կարծիքով, - գրում է Ռ. Գաբիտովան, - հերմենևտիկական մեթոդը ոչ մի դեպքում չպետք է որոշվի հետազոտության առարկա դարձած տեքստի պատմական յուրահատկություններով: Հասկացման գործընթացը, իր համընդհանրության մեջ, մի տեսակ «ազատագրվում է» որոշակի պատմական պայմանավորվածությունից ու կախվածությունից»<sup>4</sup>: Տեքստերի իմաստի մեջ ուղղակի ներթափանցմանը խանգարող բազմաթիվ «արգելքները» հաղթահարելու համար անհրաժեշտ է դրանք թարգմանել, բացատրել և մեկնել: Շլայերմախերի տեսակետից հերմենևտիկայի կոչումը հասկացման ընթացքում այդ «արգելքները» հաղթահարելն է: Այն անհրաժեշտ է այնտեղ, ուր մենք գործ ունենք չհասկացման իրավիճակի հետ: Շլայերմախերը հերմենևտիկական ընդունում էր որպես հասկացման արվեստ և ոչ թե հասկացածը մեկնաբանելու արվեստ, ինչպես մինչ Շլայերմախերը կարծում էր Ֆ. Աստը: Ըստ Շլայերմախերի, հասկացումը սովորաբար կրում է միջանձային բնույթ: Այն «ճանաչողության ոլորտում տաղանդավոր մարդու կարիք ունի»<sup>5</sup>: Եւ, հերմենևտիկան որպես «ոգու մասին գիտությունների» (հումանիտար գիտությունների) մեթոդ, «ուրիշի» ներաշխարհի հասկացման արվեստ դիտելով՝ հիմնավորում էր, որ

<sup>3</sup> *Рикер П.* Конфликт интерпретации: очерки о герменевтике. М., 1995. с. 4.

<sup>4</sup> *Габитова Р. М.* "Универсальная" герменевтика Фридриха Шлейермахера // Герменевтика: история и современность. М., 1985, с. 73.

<sup>5</sup> *Шлейермахер Ф. Д. Э.*, Герменевтика. // Альманах «Общественная мысль», М., 1993. с. 227.

հոգեբանական հարմարվողականությամբ կարելի է ներթափանցել հին տեքստերի հեղինակների, ցանկացած պատմական գործչի ներաշխարհի և այդ հիմքի վրա վերականգնել պատմական դեպքերը և ավելի խորությամբ հասկանալ դրանք, քան գիտակցել են հենց այդ դեպքերի մասնակիցները: Այս առումով Շլայերմախերը ևս մեկ քայլ առաջ գնաց: Նա կարծում էր, որ հոգեբանական հարմարվողականությամբ հերմենևտը ի վիճակի է ավելի աղեքվատ հասկանալ իր կողմից մեկնաբանվող հեղինակի անհատական հոգեբանությունը և այն խթանների համախումբը, որոնք շարժեցին նրա գրիչը, քան «իր ժամանակին կիսագիտակցելով հասկացել էր հենց հեղինակը»: Շլայերմախերը իր առաջադրած այս դրույթը մեկնում է հետևյալ կերպ. մեկնիչը, անտեղյակ լինելով հեղինակի «անմիջական գիտելիքներին», դիտավորություններին ու հակումներին, աշխատելու էր գիտակցել նրա կողմից չգիտակցված և մինչև վերջ չհասկացված բազմաթիվ երևույթներ: Այս կապակցությամբ Վ. Կուզնեցովը գրում է. «Չետազոտողը հեղինակի աշխարհից կտրված լինելով հասկացմանը խանգարող բազմաթիվ խոչընդոտներով, հայտնվում է բուրբուկին այլ պայմաններում: Օրինակ, նա չէր կարող մեխանիկորեն օգտագործել հին լեզուն: Նա այն պետք է յուրացներ գիտակցորեն: Ճիշտ նույն կերպ նաև բազմաթիվ այլ հանգամանքներ, որոնք հեղինակին տրվում էին անգիտակցորեն, հետազոտության ժամանակ հանդես էին գալիս որպես գիտակցական, զուտ բանական: Այդ պատճառով էլ հետազոտողը կարող էր իմանալ ավելին, քան հեղինակը: Սա վերաբերում է ոչ միայն լեզվին, այլև ողջ մշակույթին, ավանդույթներին և առհասարակ այն ամենին, ինչի մասին մարդն իր կյանքի ընթացքում չի էլ մտածում»<sup>6</sup>: Շլայերմախերն առաջադրեց «լավագույն հասկացման» սկզբունքը: Ըստ նրա, գլխավոր և հիմնական խնդիրն այն է, որ համապատասխան խոսքը հասկացվի նույնքան լավ, ապա նաև լավագույնս, քան հասկացել է նրա հեղինակը: Շլայերմախերը գրում է. «Հատկապես լեզուն է հնարավոր դարձնում հասկացումը, որը նաև լեզվի հասկացումն է, և հասկացում է լեզվի միջոցով, այսինքն՝ հասկացում, որը կատարվում է ասված և նկարագրված խոսքի միջոցով»<sup>7</sup>:

Այս առիթով Գաղամերը գրում է. «Լավագույն հասկացումը, որը մեկնողին առանձնացնում է հեղինակից, վերաբերվում է ոչ թե տեքստում քննարկվող հասկացման առարկային, այլ միայն տեքստի հասկացմանը, այն բանին, ինչը

<sup>6</sup> Кузнецов В.Г. Герменевтика: Эволюция идей и современное состояние // Вестник Моск. ун-та. серия философия, 1992 " 2 с.71.

<sup>7</sup> Մեքք. ըստ *Вашестов А. Г.* Фридрих Шлайермахер: Теолог- философ- педагог, էջ 37.



նկատի ունենալ և արտահայտել էր հեղինակը: Այսպիսի հասկացումը կարող է կոչվել լավագույն այնքանով, որքանով որոշակի տեսակետից հասկացումը ներառում է լրացուցիչ իմացաբանական տարր համեմատած այն ձևի հետ, որով արտահայտվում է նրա բովանդակությունը: Դրանով տվյալ տեքստը ներկայացնում է ինքնին հասկանալի որոշակի նյութ»<sup>8</sup>:

Հետազոտական գրականության մեջ (Օ. Բոլմով, Գ. Գադամեր) այն տեսակետն է արտահայտվել, որ թեև ձևական իմաստով հեղինակին ավելի լավ հասկանալու շլայերմախերյան սկզբունքը նման է Կանտի, Ֆիխտեի, Շելլինգի մոտեցմանը, բայց բովանդակային իմաստով էական փոփոխություն է կրել: Ըստ Գադամերի.- «Շլայերմախերը հերմենևտիկական վերածեց յուրահատուկ, ցանկացած բովանդակությունից զուրկ մեթոդի և առաջինն առաջադրեց մի մոտեցում. ըստ որի մեկնողի իր հետազոտության առարկայի նկատմամբ ունեցած գերակայության զգացողությունը կարող է սկզբունքային բնույթ ձեռք բերել: Ֆիխտեի ու Կանտի մոտ խոսքը վերաբերում է ոչ թե բանասիրական սկզբունքին, այլ՝ փիլիսոփայական հավակնությանը, որը հասկացային մեխանիզմի մեծ ճշգրտությամբ ձգտում է հաղթահարել այս կամ այն թեզիսում առկա հակասությունը: Սա նշանակում է, որ ձևավորվում է ամբողջությամբ ռացիոնալիզմի ոգով կառուցված մի սկզբունք, որը հենվելով միայն գիտակցության վրա, օգնում է բացահայտելու հեղինակի իրական ձգտումներն ու պատկերացումները, որոնք հեղինակը պետք է որ կիսեր մեկնողի հետ»<sup>9</sup>: Շարունակելով իր միտքը, այնուհետև Գադամերը գրում է. «Տվյալ դեպքում մենք գործ ունենք շրջադարձի հետ ընդհանուր լուսավորականից դեպի նշված դրույթի նոր, ռոմանտիկական նշանակությունը, որ հենց Շլայերմախերը փիլիսոփայական բննադատության այդ սկզբունքը վերածեց մեկնության բանասիրական արվեստի»<sup>10</sup>:

*«2ուտ բանականության քննադատություն»* աշխատության մեջ Կանտը, Պլատոնի փիլիսոփայության մեջ «իդեա» հասկացության ճշգրիտ իմաստի բացահայտման հարցի հետ կապված, խոսում է լավագույն հասկացման սկզբունքի մասին, ըստ որի, հեղինակի լավագույն հասկացումը հնարավոր է նրա օգտագործած հասկացությունների ճշգրտման, սրբագրման շնորհիվ, այսինքն՝ նրանց մեջ պարզություն և հստակություն մտցնելու շնորհիվ: Կանտը, ինչպես երևում է, ելնում է հեղինակի նկատմամբ մեկնողի որոշ գերակայությունից:

<sup>8</sup> Гадамер Г.-Г. Истина и метод. Основы философской герменевтики, с. 240.

<sup>9</sup> *Երկն տեղում*, էջ 242-243:

<sup>10</sup> *Երկն տեղում*, էջ 243:

Նույն կարգի գերակայությունից էին ելնում նաև Շլայերմախերը և Շլեգելը՝ ազատելով աստվածաշնչյան մեկնագիտությունը (Շլայերմախեր) և գրական քննադատությունը (Շլեգել) ինչպես աստվածաշնչյան, այնպես էլ դասական գրական ավանդույթների ճնշումից: Դրա հետևանքով Շլայերմախերի հերմենևտիկական ուսմունքը ձեռք բերեց փիլիսոփայական ուղղվածություն:

Ինչպես գրում է Գադամերը.- «Շլայերմախերի մշակած համընդհանրական հերմենևտիկական կողմնորոշված էր դեպի կայուն հեղինակության տեքստերը: Իհարկե, պատմական գիտակցության մեջ կարևոր քայլը նշանավորվեց նրանով, որ Աստվածաշնչի և հնագույն դասական գրականության մեկնությունը ամբողջովին ազատագրվեց դոգմաներով թելադրված շահագրգռվածությունից»<sup>11</sup>: Գադամերը գտնում է, որ Շլայերմախերն ու Չեգելը ներկայացնում են տեսական դիրքորոշմամբ հակադիր, բայց միմյանց սերտորեն կապված երկու ուղղություններ: Շլայերմախերը ձգտում է «վերարտադրել արվեստի ստեղծագործության անցյալ իրավիճակը», որը ենթակա է «պատմական վերակազմության»:

Հերմենևտիկական ցանկացած հասկացում, որը հիմնված է Շլայերմախերի գաղափարների վրա, լինի այն արվեստի նկատմամբ ժամանակակից պահանջներով թելադրված հեղինակային ոգով մեկնություն (այսպիսի մեկնությունը, որպես երկրորդային բնույթի, Գադամերը կոչում է «նախորդ արտադրության վերարտադրություն»), կամ ձգտումը անցյալ կյանքի նույնական վերարտադրության նկատմամբ, Գադամերի կարծիքով, «ավելի իմաստավորված չէ, քան անցյալ կյանքի վերականգնումը»<sup>12</sup>: Մեկնության այս երկու տիպերն էլ չեն ներկայացնում հերմենևտիկայի իսկական էությունը: Եթե Շլայերմախերը ձգտում էր ձևավորել հերմենևտիկական որպես համընդհանրական գիտաճյուղ՝ որքան հնարավոր է այն «մոտեցնելով» փիլիսոփայությանը, ապա Չեգելի փիլիսոփայական համակարգի համար հերմենևտիկական խնդիրը դարձավ մասնավոր դեպք: Չեգելը հերմենևտիկայի իրական փիլիսոփայական տեսանկյունը տեսնում էր արդիականության հետ նրա կապի մեջ՝ միայն պատմության և արդիականության դիալեկտիկական կարող է հիմք դառնալ հերմենևտիկական մեթոդի համար: Գադամերը հստակորեն ընդգծում է Շլայերմախերի արմատական տարբերությունը Չեգելից, որոշելով, որ, ըստ Չեգելի, պատմական ոգու էությունը, վերջին հաշվով, ոչ թե անցյալի վերականգնման, այլ ժամանակակից կյանքի հետ մտային հաշտեցման մեջ է: Հատկապես պատմության և արդիա-

<sup>11</sup> Гадамер Г.-Г. Истина и метод. Основы философской герменевтики, с. 244.

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում:

կանության դիպլեկտիկական փոխազդեցությունն է հնարավորություն տալիս իրար հետ համեմատելու հերմենևտիկական գործունեության ձեռքբերումներն ու կորուստները: Հերմենևտիկական արվեստի նպատակը չպետք է դառնա հեղինակի աշխարհ մուտք գործելը, նրան ընտելանալը, հարմարվելը, այլ պետք է լինի այն իր մեջ պատկերացնելը՝ արդիականացնելու նպատակով: Անցյալի պարզագույն պատկերացումը թեև որոշակի իմաստով կարող է գիտական խնդիր լինել, այնուամենայնիվ, դատարկ, միակողմանի, արտաքին երևույթ է և կենսական կապերով կապված չէ արդիականության հետ:

Ըստ Շլայերմախերի, հերմենևտը երևույթները հետազոտում է մեծ տեսադաշտում, նրան հասանելի է դրանց պատճառահետևանքային ամբողջությունը, մասի մեջ նա տեսնում է ամբողջը, իսկ ամբողջն ընկալում է իբրև մասերի միասնություն: Այս երևույթը Շլայերմախերն անվանեց «հերմենևտիկական շրջան»:

Հերմենևտիկական շրջանի սկզբունքը հեղմենևտները վերցրել են անտիկ հռետորությունից: Այն որպես ամբողջի և մասի հարաբերակցության հարց լայնորեն կիրառվում էր նաև միջնադարյան մեկնագիտության մեջ, որը աստվածաշնչյան տեքստերի հասկացման համար հավատ էր պահանջում, իսկ հավատի համար՝ հասկացում: Հերմենևտիկական շրջանը ենթադրում էր, որ ամբողջը հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ մասերը, իսկ մասերի հասկացման համար պետք է հասկանալ ամբողջը: Ըստ Շլայերմախերի, հասկացումն իրականանում է այսպիսի փոխհարաբերակցության սահմաններում՝ անցնելով իմաստի սրբագրման մի քանի փուլերով (ամբողջից՝ մասերին և հակառակ) և արդյունքում, ըստ էության, ձեռք է բերվում ողջ տեքստի աղեքվատ հասկացումը: Շլայերմախերը գտնում է, որ ինչպես ամբողջն է հասկացվում մասերից, այնպես էլ մասը կարող է հասկանալի լինել ամբողջի շնորհիվ: Այս դրույթը հերմենևտիկական շրջանի համար մեծ կարևորություն ունի և անվիճելի է, որովհետև բազմաթիվ հերմենևտիկական կանոններ այս կամ այն չափով հիմնավորվում են սրանով<sup>13</sup>: Հերմենևտիկական շրջանի սկզբունքը այստեղ տարբերվում է Շլայերմախերի նախորդների՝ Օգոստինոս երանելու և Ֆլացիուսի տեսակետներից: Շլայերմախերը քննարկում է հերմենևտիկական շրջանի երկու տարատեսակ:

<sup>13</sup> *St'u Шлейермахер Ф. Д. Э.*, Академические речи 1829 года. М., 1987. с. 218.

- Առաջինի դեպքում տեքստի մի մասը հարաբերակցվում է ողջ տեքստի հետ որպես ամբողջի և ամբողջի իմաստը պարզաբանվում է մասերի հարաբերությամբ:

- Երկրորդ դեպքում ինչ որ տեքստ-հուշարձան դիտվում է որպես մաս, իսկ մշակույթը, որում այն գործառնում է, դիտվում է որպես ամբողջ:

Այս դեպքում մասի և ամբողջի միջև հարաբերությունը ծեռք է բերում բոլորովին այլ բնույթ: Այստեղ գործում է սեմիոտիկայի օրինաչափություններից մեկը, ըստ որի, տեքստը պետք է դիտարկել որպես որոշակիորեն եզակի նշան, որը հետագա տրոհման ենթակա չէ: Եզակի նշան-տեքստը մշակույթում գործառնելով ամբողջի մեջ, հերմենևտիկայի առումով իրենից հետազոտությունների մեջ նոր տեսանկյուն է ներկայացնում, որը միավորվում է մշակութաբանության, սեմիոտիկայի, կառուցվածքային լեզվաբանության գաղափարների ու մեթոդների հետ:

Այսպիսով՝ Շլայերմախերի ավանդը հերմենևտիկական մեկնագիտության ձևավորման գործում, ըստ էության, նրանում է, որ նա միջնադարյան հերմենևտիկան կոնկրետ տեքստերի մեկնության խնդիրներից կողմնորոշեց դեպի դրանց հասկացման, հետազոտման համընդհանուր սկզբունքները: Շլայերմախերը հերմենևտիկան որպես «ոգու մասին գիտությունների» (հումանիտար գիտությունների) մեթոդ, «ուրիշի» ներաշխարհի հասկացման արվեստ դիտելով, հիմնավորում էր, որ հոգեբանական հարմարվողականությամբ կարելի է ներթափանցել հին տեքստերի հեղինակների, ցանկացած պատմական գործչի ներաշխարհ և այդ հիմքի վրա վերականգնել պատմական դեպքերը և ավելի խորությամբ հասկանալ դրանք, քան գիտակցել են հենց այդ դեպքերի մասնակիցները: Զարգացնելով այս գաղափարը՝ Շլայերմախերը ևս մեկ քայլ առաջ գնաց: Նա գտնում էր, որ հոգեբանական հարմարվողականությամբ հերմենևտը ի վիճակի է ավելի աղեքվատ հասկանալ իր կողմից մեկնաբանվող հեղինակի անհատական հոգեբանությունը և այն խթանների համախումբը, որոնք շարժեցին նրա գրիչը, քան «իր ժամանակին կիսագիտակցելով հասկացել էր հենց հեղինակը»: Շլայերմախերը հերմենևտիկան վերածեց յուրահատուկ, ցանկացած բովանդակությունից զուրկ մեթոդի և առաջինը առաջադրեց մի մոտեցում, ըստ որի մեկնողի իր հետազոտության առարկայի նկատմամբ ունեցած գերակայության զգացողությունը կարող է սկզբունքային բնույթ ունենալ: Այս ամենի արդյունքում Շլայերմախերի հերմենևտիկական ուսմունքը ծեռք բերեց փիլիսոփայական ուղղվածություն: